




Հաշվեքննության արդյունքների
Ամփոփ վերլուծական տեղեկագիր

Պետական բյուջեի կատարումը 2020թ. I կիսամյակում.

հաշվեքննության արդյունքներ



Հաշվեքննիչ պալատի առաքելությունն է՝ նպաստել պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հանրային բարիքն օրինական և արդյունավետ ճանապարհով բաշխելու գործընթացին:

Այդ նպատակով Հաշվեքննիչ պալատը ժամանակին, ինչպես նաև մասնագիտական և անկողմնակալ ճանապարհով, հաշվեքննության արդյունքների վերաբերյալ տեղեկատվություն է տրամադրում Ազգային ժողովին և հանրությանը:

Հաշվեքննիչ պալատն արտաքին պետական հաշվեքննություն (պետական (հանրային) հատվածում արտաքին աուդիտ) իրականացնող անկախ պետական մարմինն է: Հաշվեքննությունը պետական և համայնքային բյուջեների միջոցներից ֆինանսավորվող պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և հիմնարկների (հաշվեքննության օբյեկտների) կողմից հանրային ֆինանսների և սեփականության ոլորտում պետական և համայնքային բյուջեների միջոցների, ստացված փոխառությունների և վարկերի, պետական և համայնքային սեփականության օգտագործումը (ֆինանսատնտեսական գործունեությունը) կարգավորող իրավական ակտերով կամ քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակներում կնքված գործարքներով սահմանված չափանիշների և պահանջների պահպանման գնահատումն է: Հաշվեքննիչ պալատը յուրաքանչյուր տարի պլանավորում և իրականացնում է ֆինանսական ու համապատասխանության, ինչպես նաև կատարողականի հաշվեքննությունների մոտեցումը, որը դիսցիպլինար նշանակություն ունեցող նոր գործիք է: Հաշվեքննիչ պալատը ղեկավարվում է թափանցիկության և հաշվետվողականության արժեքներով և պարբերաբար Ազգային ժողովին և հանրությանը ներկայացնում է հաշվետվություններ հանրային միջոցների օգտագործման օրինականության և արդյունավետության վերաբերյալ: Հաշվեքննիչ պալատի առանցքային նպատակադրումն է՝ օգտակար լինել հանրությանը, դրական փոփոխություններ մտցնել քաղաքացու կյանքում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հապավումներ 4

Տեղեկագրի մասին 5

Հիմնական փաստեր 6

Մաս 1

Խեղաթյուրումներ 7

Մաս 2

Անհամապատասխանություններ 11

Մաս 3

Արդյունքային ցուցանիշներ 19

Մաս 4

Հետհսկողություն 22

Հավելված 1

Տեղեկագրի կազմման մեր մոտեցումը 26

Հավելված 2

Հաշվեքննությունների ամփոփ արդյունքներ 30

Այս տեղեկագրի էլեկտրոնային տարբերակը ներկայացված է Հաշվեքննիչ պալատի կայքում՝ www.armsai.am:

Հաշվեքննիչ պալատի աշխատանքների մասին հավելյալ տեղեկություններ ստանալու համար, կարող եք դիմել՝

Հաշվեքննիչ պալատ
19 Բաղրամյան
ք. Երևան
Հայաստանի Հանրապետություն

✉ secretariat@armsai.am

🌐 www.armsai.am

Հապավումներ

ՋԿ	Ջրային կոմիտե
ԵԶԲ	Եվրոպական զարգացման բանկ
ՓԾ	Փրկարար ծառայություն
ԿԳՄՍՆ	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ԳԿ	Գիտության կոմիտե
ՊՈԱԿ	Պետական ոչ առևտրային կազմակերպություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՍԱԾ	Սոցիալական ապահովության նախարարություն
ԱԳՆ	Արտաքին գործերի նախարարություն
ԱԻՆ	Արտակարգ իրավիճակների նախարարություն
ՊՆ	Պաշտպանության նախարարություն
ԴԴ	Դատական դեպարտամենտ
ՖՆ	Ֆինանսների նախարարություն
Ոստ	Ոստիկանություն
ՊԵԿ	Պետական եկամուտների կոմիտե
ՏԿԵՆ	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
ԱԱԾ	Ազգային անվտանգության ծառայություն
ՎԱ	Վարչապետի աշխատակազմ
ԷՆ	Էկոնոմիկայի նախարարություն
ԱՍՀՆ	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
ՓԾ	Փրկարար ծառայություն
ՓԲԸ	Փակ բաժնետիրական ընկերություն
ԱՆ	Առողջապահության նախարարություն
ՋՕԸ	Ջրօգտագործող ընկերություն
ՄԺԾԾ	Միջնաժամկետ ծախսերի ծրագիր
ԾԻԳ	Ծրագրերի իրականացման գրասենյակ

Տեղեկագրի մասին

Հաշվեքննության արդյունքների այս վերլուծական տեղեկագիրը (այսուհետ՝ Տեղեկագիր) կազմվել է՝ ղեկավարվելով «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերով, հիմք ընդունելով ՀՀ 2020թ. առաջին կիսամյակի պետական բյուջեի հաշվեքննությունների (այսուհետ՝ կիսամյակային հաշվեքննություններ) արդյունքները: Տեղեկագրի պատրաստումը Հաշվեքննիչ պալատի նախաձեռնությունն է՝ առաջնորդվելով թափանցիկության և հաշվետվողականության սկզբունքներով:

Տեղեկագրի առանձին բաժիններում քննարկվել են կիսամյակային հաշվեքննությունների արդյունքում արձանագրված անհամապատասխանությունները և խեղաթյուրումները, դրանց պատճառները, պարզվել են առավել ուշագրավ, ինչպես նաև հաճախ հանդիպող անհամապատասխանություններն ու խեղաթյուրումները, ներկայացվել են առաջարկություններ բյուջետային ծրագրերում նկարագրված ոչ ֆինանսական չափորոշիչների բարելավման վերաբերյալ:

Տեղեկագիրը ներկայացվել է ՀՀ Ազգային ժողովի ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովին, ինչպես նաև տեղադրվել ՀՀ հաշվեքննիչ պալատի պաշտոնական կայք-էջում՝ www.armsai.am:

Հաշվեքննիչ պալատը քննարկումներ է իրականացնելու պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հետ՝ տեղեկագրում ներկայացված անհամապատասխանությունների և խեղաթյուրումների շտկման, հետագայում դրանց կանխարգելման և բացառման համար:

Տեղեկագրի կազմման մեր մոտեցման վերաբերյալ առավել մանրամասն տեղեկություններ կարող եք ստանալ Հավելված 1-ից:

Հիմնական փաստեր



1.6 մլրդ

Խեղաթյուրումներ¹
696.7 մլրդ դրամ
հաշվեքննության ծածկույթում



78 դեպք

Անհամապատասխանություններ¹



716.7 մլրդ

Եկամուտներ²



765.6 մլրդ

Ծախսեր²



97.7%

Եկամուտների
կատարողականը²



82.6%

Ծախսերի
կատարողականը²



48.9 մլրդ

Դեֆիցիտ²



22%

Վարկային ծրագրերի
շրջանակներում ծախսերի
կատարողականը²

¹ Արձանագրվել են ՀՀ 2020թ. I կիսամյակի պետական բյուջեի կատարման հաշվեքննությունների արդյունքում: Կիսամյակային հաշվեքննությունների վերաբերյալ առավել մանրամասն տվյալների կարող եք ծանոթանալ Հավելված 2-ում:

² ՀՀ 2020թ. I կիսամյակի պետական բյուջեի կատարման վերաբերյալ ցուցանիշներ:

ՄԱՍ 1. Խեղաթյուրումներ

712.7 մլն

-ի չափով խեղաթյուրում է արձանագրվել ՋԿ-ի կողմից կատարված «Ոռոգման համակարգի առողջացում» ծրագրի հաշվեքննությամբ

Խեղաթյուրումն առաջացել է վարկային ծրագրերի շրջանակներում կատարվող ֆինանսավորումների հիմքում ընկած մասհանման հայտերի ձևավորման և շրջանառության թերի ընթացակարգերի, դրանց առնչությամբ ՋԿ-ի վերահսկողական գործառույթների սահմանափակության և վճարումների իրականացման գործընթացում դրա՝ սուկ գումար փոխանցողի դերակատարման պատճառով: Մասնավորապես՝

«Ոռոգման համակարգի առողջացում» ծրագրի «ԵԶԲ աջակցությամբ իրականացվող ոռոգման համակարգերի զարգացման ծրագրի շրջանակներում ՋԿ ենթակառուցվածքների հիմնանորոգում» և «Ֆրանսիայի Հանրապետության կառավարության աջակցությամբ իրականացվող Վեդու ջրամբարի կառուցում» միջոցառումների «Շենքեր և շինություններ» հոդվածի գծով հաշվետու ժամանակահատվածում կատարվել է 914.8 մլն. և 1,002.6 մլն. դրամի չափով դրամարկղային ծախս, իսկ ըստ հայտի ֆինանսավորվել է 516.2 մլն. և 688.6 մլն. դրամ, համապատասխանաբար: Ըստ այդմ՝ ֆինանսավորման ենթակա գումարը գերազանցվել է **398.6 մլն.** և **314.0 մլն. դրամով**, համապատասխանաբար:

Այս հիմնախնդրին անդրադարձ էր կատարվել նաև 2020թ. երեք ամիսների հաշվեքննության ընթացքում և առաջարկվել էր ՏԿԵՆ-ին վերանայել վարկային ծրագրերի կատարման ընթացքում

Ֆինանսավորման հետ կապված ընթացակարգերը՝ մասհանման հայտերի ձևավորման, ներկայացման, ընդունման և վճարման ենթակա գումարների ճշտության ապահովման հարցերում ՋԿ-ին վերապահելով վերահսկողական գործառույթներ՝ բացառելու համար մասհանման հայտերով իրական ծավալից ավելի ֆինանսական միջոցների հատկացումը: Խնդիրը շարունակում է մնալ չլուծված:

514.3 մլն

-ի չափով խեղաթյուրում է արձանագրվել ՏԿԵԼ-ի կողմից կատարված «Միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների պահպանման և անվտանգ երթևեկության ծառայություններ» ծրագրի հաշվեքննությամբ

Խեղաթյուրումն առաջացել է ՀՀ ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային որոշ ճանապարհների ըստ նշանակության դասակարգումը «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենքի պահանջներին ոչ համապատասխան իրականացնելու պատճառով, այդ թվում պայմանավորված նրանով, որ՝

- Որպես հանրապետական նշանակության դասակարգված ավտոճանապարհներից 569.3 կմ-ը մարզային նշանակության ավտոճանապարհներ են, որոնց պահպանության համար կատարողականներով հաշվարկվել է 372.2 մլն դրամ:
- Որպես միջպետական նշանակության դասակարգված ավտոճանապարհներից 387 կմ-ը հանրապետական նշանակության ավտոճանապարհներ են, որոնց պահպանման համար հաշվարկված գները գերազանցում են հանրապետական նշանակության ավտոճանապարհների պայմանագրային գները 55.7 մլն դրամով:
- Որպես միջպետական նշանակության դասակարգված ավտոճանապարհներից 167.8 կմ-ը տեղական նշանակության ճանապարհներ են, որոնց պահպանման համար հաշվարկված գները գերազանցում են տեղական նշանակության ավտոճանապարհների համար առաջարկված պայմանագրային գները 38.0 մլն դրամով:

- Որպես հանրապետական նշանակության դասակարգված ավտոճանապարհներից 58.7 կմ-ը դաշտամիջյան ճանապարհներ են, որոնցից 37.1 կմ-ի պահպանության համար հաշվարկվել է 23.5 մլն դրամ, այնինչ ՀՀ օրենսդրությամբ այդ ճանապարհների պահպանություն չի նախատեսվում:

- Որպես միջպետական նշանակության դասակարգված ավտոճանապարհներից 34.5 կմ-ը դաշտամիջյան ճանապարհներ են, որոնց պահպանման համար վճարվել է 10.6 մլն դրամով ավելի գումար:

242.7 մլն

-ի չափով խեղաթյուրում է արձանագրվել ՏԿԵՆ-ի կողմից կատարված «ԱԶԲ-ի աջակցությամբ իրականացվող Մ6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ճանապարհի կառուցում և հիմնանորոգում» ծրագրի հաշվեքննությամբ

ԱԶԲ-ի աջակցությամբ իրականացվող «Մ6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ճանապարհի կառուցում և հիմնանորոգում» ծրագրի փաստացի ծախսը կազմել է 935.3 մլն. դրամ, սակայն «Բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի» հաշվետվությունում ներկայացվել է 797.6 մլն. դրամ կամ 242.7 մլն. դրամով պակաս:

111.6 մլն

-ի չափով խեղաթյուրում է արձանագրվել ԷՆ-ի կողմից կատարված «Էկոնոմիկայի ոլորտում պետական քաղաքականության մշակում» ծրագրի հաշվեքննությամբ

Խեղաթյուրումն առաջացել է «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» հոդվածում 111.6 մլն. դրամի չափով պարզևատրման ծախսերի ներառման պատճառով:

30.0 մլն

-ի չափով խեղաթյուրում է արձանագրվել ԷՆ-ի կողմից կատարված «Գյուղատնտեսության խթանման ծրագիր»-ի հաշվեքննությամբ

Հայաստանի խախտագործության և գինեգործության հիմնադրամի հաշվապահական համակարգի տեղեկատվության ուսումնասիրությամբ արձանագրվել է, որ Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունում (<-2) դրամարկղային և փաստացի ծախսերը խեղաթյուրված են 14.1 և 5.1 մլն դրամներով, համապատասխանաբար:

Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունում դեբիտորական պարտքերի չափը խեղաթյուրված է եղել 10.9 մլն դրամով:

7.8 մլն

-ի չափով խեղաթյուրում է արձանագրվել ԱԻՆ-ի կողմից կատարված «Փրկարար ծառայություններ» ծրագրի հաշվեքննությամբ

ՓԾ համակազմում գործող փողային նվազախմբի 4 երաժիշտների պաշտոնային դրույքաչափերը 1.3-ի փոխարեն հաշվարկվել են 2.23 գործակցով, որի պատճառով նշված աշխատակիցներին ավելի է հաշվարկվել և վճարվել 1.5 մլն դրամ:

ՀՀ օրենսդրությունը երաժիշտների համար հավելավճարներ չի նախատեսում, սակայն ԱԻՆ-ը 21 երաժիշտի յուրաքանչյուր ամիս վճարել է 47.8 հազ. դրամ, որի պատճառով նշված աշխատակիցներին ավելի է հաշվարկվել և վճարվել 6 մլն դրամ:

ԱԻՆ-ը ուսումնական փորձաշրջան անցնող աշխատակիցների պաշտոնային դրույքաչափը սահմանել է տվյալ պաշտոնի համար նախատեսված դրույքաչափի 50%-ի չափով՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված ամբողջական դրույքաչափի փոխարեն: Արդյունքում առաջացել է խեղաթյուրում 0.3 մլն դրամի չափով:

ՄԱՍ 2.

Անհամապատասխանություններ

Պետական գնումներ

1. ԷՆ-ում հաշվեքննության շրջանակներում արձանագրվել է, որ Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի կնքած 8 գնման պայմանագրերի դեպքում չի պահպանվել պայմանագրերի կնքելու և կնքված պայմանագրերի հայտարարությունները ռուսերեն լեզվով հրապարակելու ՀՀ օրենսդրության պահանջը:

2. ԷՆ-ում հաշվեքննության շրջանակներում արձանագրվել է, որ Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի կարիքների համար ձեռք բերվող աշխատանքների համար կազմված տեխ. բնութագրերում նշված աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման ժամկետներն իրականացվել են շեղումներով: Մասնավորապես, 23.03.2020թ. կնքվել է պայմանագիր, իսկ տեխնիկական բնութագրում աշխատանքների սկսման ժամկետ է սահմանվել «մարտ ամսվա առաջին կեսի 10-15 օրը»: Բացի այդ, չի կատարվել ՀՀ օրենսդրության պահանջը՝ պայմանագրում փոփոխություն կատարելու մասին համաձայնագիր կնքելով տեխնիկական բնութագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ (փոսերի խորացման աշխատանքները ձեռքով անելու փոխարեն տրակտորով անելու վերաբերյալ համաձայնեցման փաստաթուղթ չի տրամադրվել):

3. ԷՆ-ում հաշվեքննության շրջանակներում արձանագրվել է, որ Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի կնքած պայմանագրով նախատեսվել է կանխավճարի հատկացման պայման այն դեպքում, երբ հրավերով նախատեսված չի եղել կանխավճար հատկացնելու հնարավորություն, ինչն արգելված է ՀՀ գնումների օրենսդրությամբ:

4. ԷՆ-ում հաշվեքննության շրջանակներում արձանագրվել է, որ Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի կնքած պայմանագրով սահմանվել է 50% կանխավճար, մինչդեռ ՀՀ օրենսդրության համաձայն, կանխավճարի չափը չէր կարող գերազանցել ընտրված մասնակցի առաջարկած գնի 25%-ը:

5. ԷՆ-ում հաշվեքննության շրջանակներում արձանագրվել է, որ Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի կնքած պայմանագրի կողմից

չի պահպանվել ՀՀ օրենսդրության պահանջն առ այն, որ պատվիրատուի կողմից կանխավճար հատկացվելու պայման նախատեսվելու դեպքում ընտրված մասնակիցը նախապես պատվիրատուին է ներկայացնում *կանխավճարի ապահովում* կանխավճարի չափով, բանկային երաշխիքի ձևով:

6. ՀՀ ոստիկանության կողմից առանձին ծրագրային միջոցառումների կատարման գծով ապրանքների մատակարարման ժամկետների խախտման համար, հաշվարկման և գանձման էր ենթակա 235.9 հազ. դրամի չափով տույժ, ինչը չի կատարվել:

7. ԳԿ-ում *բացակայել են* պատասխանատու ստորաբաժանման կողմից կազմվող և հաստատվող *գնման հայտերը*:

8. ԿԳՄՄՆ-ում հաշվեքննության շրջանակներում արձանագրվել է, որ «Երևանի զարդարվեստի պետական արհեստագործական ուսումնարան» ՊՈԱԿ-ի 12 չափաբաժիններով՝ 709.0 հազ. դրամի չափով կատարված գնումների գծով *բացակայում են* գնման նպատակով կատարված գործողությունների և դրանց հիմքերի վերաբերյալ էլեկտրոնային փաստաթղթերը, մասնավորապես՝ մասնակիցներին ուղարկված *հրավերները*:

9. ՀՀ ոստիկանության կողմից ապրանք ձեռք բերելիս («Սվիտեր» ապրանքատեսակի) չի պահպանվել ՀՀ օրենսդրության պահանջն առ այն, որ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի հատկանիշները՝ *բացառելով փարակերպ մակնաբանությունը*:

10. ԳԿ-ն «Procurement.am» տեղեկագրում *չի հրապարակել* գնման հրավերները և պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունները: Հրապարակվել են միայն կնքված պայմանագրի մասին հայտարարություններ, ընդ որում՝ սահմանված ժամկետների ուշացումներով:

11. ԿԳՄՄՆ-ում հաշվեքննության շրջանակներում արձանագրվել է, որ «Երևանի զարդարվեստի պետական արհեստագործական ուսումնարան» ՊՈԱԿ-ը «Procurement.am» տեղեկագրում *չի հրապարակել* գնման հրավերները, պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունները, կնքված պայմանագրի մասին որոշումները, ընտրված մասնակցի վերաբերյալ տեղեկություններ:

12. ԳԿ-ն երկու չափաբաժիններով հայտարարված գնման (1,240.0 հազ. դրամի չափով) ընթացքում *չի սահմանել և պահպանել* անգործության ժամկետը:

13. ԳԿ-ն գնումների տարեկան պլանով նախատեսված մեկ չափաբաժինը տրոհել է մասերի՝ առանց գնումների պլանում *փոփոխությունների* կատարման:

14. ԳԿ-ի կողմից՝ իբրև պատվիրատուի, տարեկան գնումների պլանով նախատեսված հեռախոսային ծառայությունների մասով 2020թ. գնում չի հայտարարվել, պայմանագիր չի կնքվել, այն շարունակել է օգտվել «Վեոն Արմենիա» ՓԲԸ-ի կողմից մատուցվող ծառայություններից՝ 2020թ. I կիսամյակի ընթացքում վճարելով 425.3 հազ. դրամ:

15. ԿԳՄՄՆ-ում հաշվեքննության շրջանակներում արձանագրվել է, որ «Երևանի զարդարվեստի պետական արհեստագործական ուսումնարան» ՊՈԱԿ-ը 2020թ. տարեկան գնումների պլանով նախատեսված հեռախոսային և համացանցային ծառայությունների մասով գնում չի հայտարարել, պայմանագիր չի կնքել, շարունակել է օգտվել «Վեոն Արմենիա» ՓԲԸ-ի կողմից մատուցվող ծառայություններից՝ 2020 թվականի I կիսամյակի ընթացքում վճարելով 75.6 հազ. դրամ:

Ֆինանսական կարգապահություն

16. ԳԿ-ն իր իրավասության սահմաններում չափաբաժիններով միջոցովաճային և միջոցամսակային վերաբաշխումն իրականացրել է՝ *առանց* սահմանված կարգով *ՖՆ-ին ծանուցելու*:

17. ՀՀ օրենսդրությամբ սահմանված բանաձևի կիրառությամբ ԿԳՄՄՆ ենթակայության ներքո գտնվող 108 ավագ դպրոցներից 24-ի ֆինանսավորման չափի վերահաշվարկի արդյունքում արձանագրվել են 22 անհամապատասխանություններ: Մասնավորապես, 20 ավագ դպրոցների գծով արձանագրվել է բանաձևով նախատեսվածից 401,031.1 հազ. դրամով *ավելի ֆինանսավորում*, իսկ 2 ավագ դպրոցների գծով՝ 9,945.1 հազ. դրամի չափով *թերֆինսավորում*:

18. ԱՍՀՆ-ի կողմից ՖՆ ներկայացված «Բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի մասին» հաշվետվությամբ, 2020թ. I կիսամյակում կատարված 19 միջոցառումների փաստացի ծախսերի ցուցանիշը չի համապատասխանում փաստացի կատարված ծավալներին: 2020թ. I կիսամյակի ընթացքում 19 միջոցառումների գծով կատարվել են 154,028.69 հազ. դրամի չափով աշխատանքներ / ծառայություններ և սահմանված ժամանակահատվածի ընթացքում հայտ (կատարողական) է ներկայացվել նախարարություն, մինչդեռ դրանք չեն

ներառվել ՖՆ ներկայացված I կիսամյակի «Բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի մասին» հաշվետվությամբ նշված փաստացի ծախսերում:

19. ԱԻՆ-ի 2020-2022թթ. ՄԺԾԾ-ում և բյուջետային հայտում մեքենաների վառելիքի ծախսերի հաշվարկի հիմնավորման ծանոթագրությունում նշված է, որ ծախսն ավելանում է 10%-ով: Մինչդեռ, ՀՀ օրենսդրության համաձայն 8 տարուց ավելի մաշվածություն ունեցող մեքենաների համար վառելիքի ծախսն ավելացվում է 5%-ով:

Պայմանագրային պարտավորություններ

20. ԶԿ-ի և «Սյունիք» ԶՕԸ-ի միջև պետական բյուջեից *սուբսիդիայի* տրամադրման 08.04.2020թ. կնքված պայմանագրի համաձայն, սուբսիդիայի գումարները տրամադրվում են ԶՕԸ-ի 2020թ. փետրվար ամսին առաջացած 14.2 մլն դրամ հարկային պարտավորությունների մասով պարտքի մարմանը: Իրականում, ԶԿ կողմից «Սյունիք» ԶՕԸ-ին նշված գումարն ուղղվել է *նախորդ* տարիների հարկային պարտավորությունների պարտքի մարմանը:

21. ԶԿ-ի և «Կոտայք» ԶՕԸ-ի միջև գարնան նախապատրաստական աշխատանքների իրականացման նպատակով կնքված պայմանագրի համաձայն, 2020թ. 1-ին կիսամյակում «Կոտայք» ԶՕԸ-ի համար նախատեսված 55.3 մլն. դրամի փոխարեն, կատարված աշխատանքների դիմաց վճարվել է 63.0 մլն. դրամ:

22. ԶԿ-ի և «Գեղարքունիք» ԶՕԸ-ի հետ կնքված 28.04.2020թ. թիվ 37 և 18.05.2020թ. թիվ 57 պայմանագրերը նախատեսել են «Գեղարքունիք» ԶՕԸ-ի *միևնույն* (մարտ) ամսվա աշխատավարձի մասով առաջացած պարտքի մարման նպատակով, որոնց գումարը, սակայն, կրկնվելու հետևանքով չի համապատասխանում պարտքի իրական ցուցանիշին:

23. ԶԿ-ն պատշաճ հսկողություն չի իրականացրել «Ջրառ» ՓԲԸ-ի հետ 22.01.2020թ. կնքված սուբսիդիայի տրամադրման N1-Ս պայմանագրի մի շարք պահանջների կատարման նկատմամբ՝ հանգեցնելով աշխատանքների հանձնման-ընդունման ակտերում աշխատանքների կատարման *ժամանակահատվածների* ոչ ճշգրիտ ներկայացմանը (նախորդների փոխարեն ընթացիկ ամսվա նշմանը), թերություններով կազմված *հայտ-գրությունների ընդունմանը* և դրանց հիման վրա սուբսիդիայի գումարների ամբողջությամբ փոխանցմանը, դրանց ծախսման ուղղությունների վերաբերյալ մեկամսյա ժամկետում սահմանված *հաշվետվությունների չներկայացմանը*:

24. ՏԿԵՆ-ի կողմից կատարվող «Մ6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ճանապարհի կառուցում և հիմնանորոգում ծրագիր»-ի սկզբից մինչև 2020թ. I կիսամյակը ներառյալ, նախատեսված 13.3 մլրդ դրամ աշխատանքի (CW-ICB M6/2016-1, CW-ICB M6/2016-2, CW-ICB M6/2016-3 պայմանագրերով) դիմաց իրականացվել են 2.5 մլրդ դրամի կառուցման և հիմնանորոգման աշխատանքներ, կամ 18.9%:

25. ԷՆ-ի և Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի միջև 25.02.2020թ. կնքված N49-20 պայմանագրով սահմանված է ՀՀ ֆինանսների նախարարի 13.03.2019թ. N254-Ն հրամանով հաստատված հաշվետվության (ձև Հ-2, Հ-4, Հ-8 և տեքստային) ներկայացում, սակայն ներկայացված հաշվետվությունում տեքստային մասը բացակայում է:

Աշխատանքային օրենսդրություն

26. Չի պահպանվել ՀՀ օրենսդրության պահանջը, ըստ որի՝ աշխատավարձը յուրաքանչյուր ամիս հաշվարկվում և աշխատանքային օրերին վճարվում է աշխատողին *ամսական առնվազն մեկ անգամ* մինչև հաջորդ ամսվա 15-ը: ԷՆ-ում հաշվեքննության շրջանակներում արձանագրվել է, որ Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի 2020թ. հաստիքացուցակը ձևավորվել է 26.02.2020թ., իսկ մինչ այդ աշխատակիցներն աշխատել են նախկինում ձևավորված հաստիքացուցակի համաձայն, սակայն չեն վճարվել: Փոխարենը, աշխատակիցները 2020թ.-ի հունվար-մարտ ամիսների աշխատավարձը ստացել են 2020թ. ապրիլ ամսին:

27. Չի պահպանվել ՀՀ օրենսդրության պահանջը, ըստ որի՝ քաղաքացիական ծառայության պաշտոնը թափուր մնալուց 3 ամիս հետո պետք է հայտարարվի մրցույթ: 08.01.2020թ. հաստատվել է ԷՆ-ի հաստիքացուցակը, իսկ 01.07.2020թ. դրությամբ ԷՆ-ում նախատեսված է եղել 441 հաստիքային միավոր, որից *82-ը՝ թափուր* պաշտոններ են: Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանում հաստիքացուցակով նախատեսված թափուր հաստիքներն, ընդհանուր առմամբ, չեն զբաղեցվել: Ավելին, պարզվել է, որ *արտահաստիքային* պայմանագրերով 9 աշխատակիցներ են ընդունվել աշխատանքի այն դեպքում երբ նույն պաշտոններով առկա էին թափուր հաստիքներ:

28. ԷՆ-ում հաշվեքննության շրջանակներում արձանագրվել է, որ «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի համաճարակաբաններն ու անասնաբույժ մասնագետներն *առանց աշխատանքային պայմանագրեր կնքելու*

2020թ. I եռամսյակի ընթացքում իրականացրել են մի շարք աշխատանքներ, որոնք ներառվել են Կենտրոնի II եռամսյակի հաշվետվության մեջ: Մինչդեռ, ՀՀ օրենսդրության համաձայն, աշխատողի և գործատուի միջև աշխատանքային հարաբերությունները ծագում են աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով կնքված գրավոր աշխատանքային պայմանագրով կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտով:

29. ԱԻՆ-ում հաշվեքննության շրջանակներում արձանագրվել է, որ Փրկարար ծառայողներին արձակուրդի տրման գործընթացը կազմակերպվել է առանց համապատասխան *հրամանի*: Փոխարենը, ՓԾ կադրերի վարչության կողմից կազմվել են 3 մասից բաղկացած արձակուրդի կտրոններ, որոնք կադրերի և ֆինանսատնտեսագիտական վարչությունների պետերի կողմից ստորագրվելուց հետո, աշխատողը համարվել է արձակուրդում:

30. ԱԻՆ-ում հաշվեքննության շրջանակներում արձանագրվել է, որ Չի պահպանվել փրկարար ծառայողների արձակուրդային վճարների հաշվարկը *միջին* աշխատավարձի հիման վրա իրականացնելու պահանջը:

31. ԱԻՆ-ում հաշվեքննության շրջանակներում արձանագրվել է, որ Չի պահպանվել փրկարար ծառայողների ամենամյա արձակուրդի համար աշխատավարձի վճարումը *ոչ ուշ, քան* ամենամյա արձակուրդը սկսելուց *երեք օր առաջ* իրականացնելու կարգը:

32. ՀՀ օրենսդրությունը պահանջում է հաստատել ՓԾ *առանձնահատուկ պայմանների* հաշվառման և փաստաթղթավորման կարգը, ինչը չի իրականացվել, Որպես հետևանք, ՓԾ բոլոր աշխատողներին (այդ թվում՝ ոչ վերաբերելի ծառայողներին) յուրաքանչյուր ամիս վճարվել են հավելումներ՝ առանց հաշվի առնելու համապատասխան պայմաններում *ծառայության փաստացի օրերի թիվը*:

33. ԱԻՆ-ը, չպահպանելով «Պետական պաշտոն զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի պահանջները, փրկարար ծառայողների ստաժի հաշվարկման մեջ ներառել է *նաև պարտադիր զինվորական ծառայության* ժամանակահատվածը: Որպես հետևանք, ծառայողների աշխատանքային ստաժն ու պաշտոնային դրույքաչափի հաշվարկման գործակիցն ավելի բարձր են սահմանվել՝ հանգեցնելով աշխատավարձի ավելի վճարումների:

34. ՀՀ օրենսդրության համաձայն՝ գործուղումից վերադառնալուց հետո, 3 աշխատանքային օրվա ընթացքում աշխատողը պարտավոր է ներկայացնել գործուղման վկայականը, փաստացի կատարված ծախսերի *հաշվետվությունը*, գործուղման ծախսերը հաստատող փաստաթղթերը: Մինչդեռ, 2020թ. I կիսամյակում ԱԻՆ-ի բոլոր գործուղված աշխատակիցների դեպքում նշված հաշվետվությունը բացակայել է:

35. Չի պահպանվել ԱԻՆ-ի գործուղվող աշխատակցին գործուղման ծախսերի հատուցումը գործուղում մեկնելուց *առնվազն մեկ օր առաջ* տրամադրելու կարգը: Մասնավորապես, ներքին գործուղումների նպատակով 2020թ. I կիսամյակի բոլոր վճարումները կատարվել են գործուղումից հետո:

36. Չի պահպանվել ՀՀ օրենսդրության պահանջն առ այն, որ անհատական աշխատանքային հարաբերությունները կարգավորելու նպատակով գործատուն ընդունում է *անհատական* իրավական ակտեր: ՓԾ-ի տնօրենի չորս հրամաններով պաշտոնների միաժամանակ նշանակվել և ազատվել են համապատասխանաբար 22, 21, 25 և 5 աշխատակիցներ:

Այլ

37. 2020թ. I կիսամյակում ԷՆ-ում ներքին աուդիտի համակարգ փաստացի *չի գործել*: Ըստ այդմ՝ չի ապահովվել ՀՀ օրենսդրության պահանջն, ըստ որի կազմակերպության ղեկավարն ապահովում է կազմակերպությունում ներքին աուդիտի համակարգի առկայությունը և գործունեությունը:

38. Փոքր և միջին «խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման պետական աջակցության ծրագրի հայտատուների մերժման պատճառների շարքում ԷՆ-ն նշել է մասնակցության համար անհրաժեշտ անասնաշենքի կառուցումն իրականացող լիցենզավորված կապալառու կազմակերպության առկայությունը: Մինչդեռ, ՀՀ օրենսդրության համաձայն, նշված ծրագիրը կարող է իրականացվել ինչպես կապալառու կազմակերպության միջոցով, այնպես էլ առանց կապալառու կազմակերպության:

39. Արձանագրվել են անհամապատասխանություններ պետական բյուջեից տրամադրվող նպաստների շահառուների քանակի և դրամական չափի վերաբերյալ ՍԱԾ-ից ստացված տեղեկատվության և պետական բյուջեի կատարման հաշվետվությունում ներկայացված ոչ ֆինանսական ցուցանիշների միջև:

40. ՀՀ օրենսդրությամբ ԱԻՆ-ի համար ծառայողական մեքենաների թվաքանակ սահմանված չէ (ՀՀ կառավարության 17.02.2005թ. թիվ 194-Ն որոշում), սակայն աշխատակազմի ենթակայության տակ են գտնվել 20 տրանսպորտային միջոցներ: ԱԻՆ-ի մեքենաների մի շարք մոդելներ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված ցանկում (ՀՀ կառավարության 01.06.2005թ. թիվ 1001-Ն որոշում)

ընդգրկված չեն: Ավելին, դրանց համար նույնիսկ ժամանակավոր նորմաներ չեն սահմանվել:

41. ԱԻՆ-ում հաշվեքննությամբ արձանագրվել է, որ սահմանված կարգով չեն լրացվել մարդատար ավտոմեքենաների երթուղային թերթերը և տրանսպորտային միջոցների շահագործման քարտերը: Մասնավորապես, երթուղային թերթերում չեն լրացվել վազքի ցուցիչի ցուցմունքները, դուրս գալու և վերադառնալու ժամը և այլն: Իսկ շահագործման քարտերում հերթափոխը ամսվա բոլոր օրերի համար լրացված չի եղել:

ՄԱՍ 3. Արդյունքային ցուցանիշներ


Այս բաժնում ներկայացված է ՀՀ 2020թ. I կիսամյակի պետական բյուջեի կատարման հաշվեքննությունների օբյեկտների կողմից կատարված ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային (ոչ ֆինանսական) ցուցանիշների կատարման վերլուծությունը:

1. ՀՀ 2020թ. I կիսամյակի պետական բյուջեի կատարման հաշվեքննությունների օբյեկտների կողմից սահմանված են եղել 1,829 արդյունքային (ոչ ֆինանսական) ցուցանիշներ՝ 661 ծրագրային միջոցառումների¹ շրջանակներում:
2. Ծրագրային միջոցառումներն, ըստ տեսակների, ունեցել են հետևյալ բաշխվածությունը.

Տեսակ	2020 I կիս.	
	Քանակ	Տես. կշիռ
Ծառայությունների մատուցում	389	58.9%
Տրանսֆերտների տրամադրում	183	27.7%
Պետական մարմինների կողմից օգտագործվող ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ	63	9.5%
Այլ պետական կազմակերպությունների կողմից օգտագործվող ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ	16	2.4%
Հանրության կողմից անմիջականորեն օգտագործվող ակտիվների հետ կապված միջոցառումներ	8	1.2%
Ֆինանսավորման ծախսերի իրականացում	2	0.3%
Ընդամենը	661	100.0%

¹ Ծրագրի միջոցառումը պետության միջամտությունն է, որը կարող է հանդես գալ պետական մարմինների, պետական կամ այլ կազմակերպությունների կողմից ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման, ապրանքների կամ տրանսֆերտների տրամադրման, կապիտալ (ոչ ֆինանսական) և ֆինանսական ակտիվների ստեղծման (ծեռք բերման) կամ օտարման, ինչպես նաև օրենքով սահմանված այլ ձևերով («Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, հոդված 1.2, մաս 18):

3. Ոչ ֆինանսական ցուցանիշներն, ըստ տեսակների, ունեցել են հետևյալ բաշխվածությունը.



! 79 ծրագրային միջոցառումների գծով (ընդհանուրի 12.0%-ը) որևէ ոչ ֆինանսական ցուցանիշ սահմանված չի եղել:

4. Չափելիության հնարավորության բացակայությունը անհնար է դարձնում նշված միջոցառումների կատարման արդյունավետության գնահատումը:

5. ՀՀ հաշվեքննիչ պալատը նախորդ տարիներին առաջարկել էր ՖՆ-ին սահմանել ոչ ֆինանսական ցուցանիշներ այն քաղաքականության միջոցառումների գծով, որոնց համար այդպիսիք դեռևս սահմանված չեն: Արձանագրված պատկերը չի համապատասխանում 2019 թվականից 100%-անոց ծրագրային բյուջետավորման ձևաչափին անցում կատարած լինելու հետ:

! 398 ծրագրային միջոցառումների գծով (ընդհանուրի 60.2%-ը) սահմանված է եղել միայն մեկ տեսակի (հիմնականում՝ քանակական) ոչ ֆինանսական ցուցանիշ, ինչը բավարար չէ ծրագրային միջոցառումների արդյունքների լիարժեք գնահատման, հետևաբար նաև՝ դրանց կատարման արդյունավետության լիարժեք գնահատման համար:



Միայն 44 ծրագրային միջոցառումների գծով (ընդհանուրի 6.7%-ը) է սահմանված եղել ոչ ֆինանսական ցուցանիշների տեսակային լիարժեք կազմ:

6. Դեռևս շարունակում է փոքր մնալ առավել արժեքավոր՝ որակական տեսակի ոչ ֆինանսական ցուցանիշների թիվը՝ կազմելով ընդհանուրի 14.5%-ը:

7. Արդյունքային ցուցանիշների հաշվետվողականության գործընթացի նկատմամբ թույլ հսկողությամբ պայմանավորված, 324 ոչ ֆինանսական ցուցանիշների դեպքում, չնայած պլանավորված մեծության առկայությանը, չի ներկայացվել փաստացի կատարողականի մեծությունը, իսկ 374 ոչ ֆինանսական ցուցանիշների դեպքում չնայած պլանավորված և փաստացի կատարված ցուցանիշների միջև շեղումների առկայությանը, չեն ներկայացվել պատշաճ բացատրություններ տարբերության պատճառների վերաբերյալ:

Առաջարկություններ

8. Հաշվի առնելով, հաշվեքննության օբյեկտների կողմից կատարված ծրագրերի գծով սահմանված ոչ ֆինանսական ցուցանիշների պլանավորման, կատարման և կատարման նկատմամբ հսկողության վերաբերյալ վերլուծության արդյունքները, Հաշվեքննիչ պալատը հաշվեքննության օբյեկտներին և լիազոր մարմնին (ՖՆ-ին) առաջարկում է՝




8.1. Սահմանել ոչ ֆինանսական ցուցանիշներ այն քաղաքականության միջոցառումների գծով, որոնց համար այդպիսիք դեռևս սահմանված չեն:





8.2. Սահմանել ոչ ֆինանսական ցուցանիշների տեսակային առավել լիարժեք կազմ՝ մեծացնելով ոչ քանակական տեսակի ոչ ֆինանսական ցուցանիշների ծածկույթը՝ հատկապես շեշտադրելով որակական տեսակի ոչ ֆինանսական ցուցանիշների ծածկույթի ընդլայնումը:



8.3. Հաշվետվողականության գործընթացում թույլ չտալ պլանավորված ոչ ֆինանսական ցուցանիշների փաստացի արդյունքների չներկայացման, ինչպես նաև պլանավորված և փաստացի կատարված արդյունքային ցուցանիշների միջև շեղումների դեպքում տարբերության պատճառների չներկայացման դեպքերի կրկնությունն արդյունքային ցուցանիշների կատարման վերաբերյալ ապագա հաշվետվությունները ներկայացնելիս:

ՄԱՍ 4. Հետհսկողություն

Այս բաժնում ներկայացված է Հաշվեքննիչ պալատի կողմից պետական բյուջեի կապարման նախորդ ժամանակաշրջանների հաշվեքննությունների արդյունքում ներկայացված առաջարկությունների կարգավիճակը և կապարման ընթացքը՝

Կապարված է  Ընթացքում է  Չի ընդունվել 

Հաշվեքննության օբյեկտ	Հաշվեքննիչ պալատի առաջարկությունը	Մեկնաբանություն
ԱԱԾ	Ձեռնարկել միջոցներ նախորդ տարվանից փոխանցված 21.7 մլն դրամի չափով դեբիտորական պարտքերը մարելու ուղղությամբ:	 Դեբիտորական պարտքերից 20.7 մլն դրամը մարվել է:
ԴԴ	Ձեռնարկել միջոցներ ՀՀ Գեղարքունիքի մարզի 1-ին իրավասության դատարանի աշխատակիցների վարձատրության գծով արձանագրված 2.3 մլն դրամ շեղումը վերացնելու ուղղությամբ:	 Կատարվել է վերահաշվարկ և 2.3 մլն դրամ շեղման չափով ֆինանսական հաշվետվությունները ճշգրտվել են:
Ոստ	Ուսումնասիրել ՇՈ կարիքների համար փոստային ծառայությունների գնման պայմանագրի գնագոյացումը և անհրաժեշտության դեպքում վերանայել պայմանագրի գինը:	
	Քննարկել փոստային ծրարները մրցութային եղանակով գնելու նպատակահարմարությունը՝ բյուջետային միջոցների տնտեսման նպատակով:	

	Ձեռնարկել միջոցներ նախորդ տարիներից փոխանցված դեբիտորական պարտքերը մարելու ուղղությամբ:	
	ՀՀ ոստիկանության համակարգի կազմակերպություններին դրամաշնորհները տրամադրել նախատեսվող միջոցառումների ծախսերի հստակ հաշվարկների հիման վրա:	
ԳԿ	Ձեռնարկել քայլեր գիտական ամսագրերի և մենագրությունների հրատարակման համար նախատեսված միջոցների ճշգրիտ, նպատակային և ամբողջական օգտագործման համար:	 <p>ԿԳՄՄՆ ԳԿ-ն դիմել է ԳԱԱ-ին՝ առաջարկելով գիտական ամսագրերի և մենագրությունների հրատարակման համար նախատեսված միջոցներն օգտագործել եռամսյակային բաշխման չափաքանակներով, ինչպես նաև ԳԿ ներկայացնել հնարավոր թերֆինանսավորման պատճառները:</p>
	Ձեռնարկել քայլեր գիտական ենթակառուցվածքների զարգացման և պահպանման ծրագրի բոլոր կատարողների նկատմամբ հսկողական գործառույթ նախատեսելու ուղղությամբ:	 <p>«Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի նախագծով նախատեսվում է ներդնել նման ընթացակարգեր:</p>
	Ձեռնարկել միջոցներ՝ վերահսկելու կնքված պայմանագրերով սահմանված կատարողականների և ներկայացվող հայտերի չափաքանակները՝ թերֆինանսավորման պատճառների բացահայտման համար:	 <p>ԳԿ-ն դիմել է շահառուներին և առաջարկել բազային ֆինանսավորմամբ դրամաշնորային միջոցները ստանալու ֆինանսավորման հայտերում ներառել եռամսյա բաշխմամբ նախատեսված ֆինանսավորման ամբողջ ծավալը, ինչպես նաև ԳԿ ներկայացնել չափաքանակներից հնարավոր շեղման պատճառները:</p>
ՋԿ	Վերանայել «Ոռոգման համակարգի առողջացում» ծրագրի կատարման ընթացքում ֆինանսավորման ընթացակարգերը՝	 <p>Առաջարկությունը դեռևս չի կատարվել: Կիսամյակային հաշվեքննությամբ կրկին</p>

	<p>մասհանման հայտերի ձևավորման, դրանց ներկայացման և ընդունման, վճարման ենթակա գումարների ճշտության ապահովման գործում ԶԿ-ին վերահսկողական գործառույթներ ամրագրելու տեսանկյունից: Բացառել մասհանման հայտերով իրական ծավալից ավելի ֆինանսական միջոցների հատկացման փաստերը:</p>	<p>արձանագրվել են ավելի ֆինանսավորման փաստեր և դրանց արդյունքում առաջացած խեղաթյուրումներ:</p>
<p>ԷՆ</p>	<p>Սուբսիդավորման ծրագրի օպտիմալ իրականացման, ինչպես նաև հսկողության գործընթացների արդյունավետության բարձրացման նպատակով՝ այսուհետ կնքել եռակողմ պայմանագիր՝ Ֆինանսական կառույցների, գյուղական ֆինանսավորման կառույցի և ԷՆ-ի միջև:</p>	<p>ՎԱ է ներկայացվել «ՀՀ կառավարության 07.03.2019թ. N184-Լ որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որով գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի օպտիմալ իրականացման, ինչպես նաև հսկողության գործընթացների արդյուն-վետության բարձրացման նպատակով՝ նախատեսվում է այսուհետ կնքել եռակողմ պայմանագիր՝ ԷՆ-ի, «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ԾԻԳ» պետական հիմնարկի գյուղական ֆինանսավորման կառույցի և Ֆինանսական կառույցների միջև:</p>
	<p>Ստեղծել սուբսիդավորվող տնտեսավարող սուբյեկտների /վարկառու/ միասնական ռեգիստր՝ հաշվի առնելով հանրության կողմից Ծրագրից օգտվելու մեծ պահանջարկը:</p>	<p>Սուբսիդավորվող տնտեսավարող սուբյեկտների /վարկառուների/ միասնական ռեգիստրի ստեղծումը դեռևս հնարավոր չէ իրականացնել՝ անհրաժեշտ ռեսուրսների բացակայության պատճառով: Միասնական ռեգիստր ստեղծելու հարցը</p>

կքննարկվի համապատասխան
ռեսուրսների առկայության
պայմաններում:

Հայաստանի խաղողագործության և
գինեգործության հիմնադրամի կարիքների
համար ձեռքբերվող ծառայությունների
հանձնման-ընդունման արձանագրություններում
վճարման ենթակա գումարը ներկայացնել ոչ թե
մեկ թվով, այլ ըստ աշխատանքների և
ծառայությունների տեսակների:

Համաձայն ՀՀ կառավարության
04.05.2020թ. «Գնման
գործընթացի կազմակերպման
մասին» N 526-Ն որոշման 108-րդ
կետի՝ «Պայմանագրի
կատարման նկատմամբ
նախնական հսկողությունն
իրականացնում է
պատասխանատու
ստորաբաժանումը: Պայմանագրի
կամ դրա մի մասի կատարման
արդյունքներն ընդունվում են
պատասխանատու
ստորաբաժանման ղեկավարի և
գնման պայմանագիր կնքած անձի
միջև հանձնման-ընդունման
արձանագրության
ստորագրմամբ, որի ձևը
սահմանում է ՀՀ ֆինանսների
նախարարը: Ըստ ՀՀ
ֆինանսների նախարարի 2017թ
հուլիսի 18-ի N 356 հրամանի
հավելվածի 8-րդ կետի՝
«Վճարման ենթակա գումարը»
բաժնում նշվում է տվյալ
ժամանակահատվածում
փաստացի մատակարարված
ապրանքի, կատարված
աշխատանքի և մատուցված
ծառայության դիմաց վճարման
ենթակա գումարը», որն ըստ
ժամանակացույցի հաստատված է
մեկ թվով, այլ ոչ թե ըստ
աշխատանքների բացվածքի
գների:



Հավելված 1

Տեղեկագրի կազմման մեր մոտեցումը

Պետական բյուջեի կատարման հաշվեքննությունների վերաբերյալ

1. Հաշվեքննիչ պալատի կողմից ներկայացվող գլխավոր փաստաթուղթը պետական բյուջեի կատարման վերաբերյալ ամենամյա եզրակացությունն է: Միայն վերջինիս առկայությամբ է, ՀՀ Սահմանադրության համաձայն, Ազգային ժողովը քննարկում և որոշում ընդունում պետական բյուջեի կատարման մասին Կառավարության կողմից ներկայացվող տարեկան հաշվետվության վերաբերյալ:
2. Պետական բյուջեի կատարման վերաբերյալ եզրակացությունը կազմվում է հաշվետու տարվա պետական բյուջեի ֆինանսական և համապատասխանության հաշվեքննության միջոցով՝ օգտագործելով նույն տարվա պետական բյուջեի երեք, վեց և ինն ամիսների կատարման նկատմամբ ֆինանսական և համապատասխանության հաշվեքննությունների ընթացիկ եզրակացությունները:
3. Ֆինանսական հաշվեքննության միջոցով որոշվում է հաշվեքննության օբյեկտի ֆինանսատնտեսական գործունեության ֆինանսական փաստաթղթերի վարման պահանջների կատարումը և դրա արդյունքում ձևավորված *հաշվետվությունների արժանահավաստությունը*:
4. Համապատասխանության հաշվեքննության միջոցով որոշվում է հաշվեքննության օբյեկտի ֆինանսատնտեսական գործունեության *համապատասխանությունն իրավական ակտերին* (ինչպես նաև քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակներում կնքված այլ գործարքներով սահմանված չափանիշներին և պահանջներին):
5. Յուրաքանչյուր տարի Հաշվեքննիչ պալատը հաստատում է գործունեության ծրագիրը մեկ տարվա համար, որի 1-ին մասը բաղկացած է տվյալ տարվա համար պլանավորված պետական բյուջեի երեք, վեց, ինն ամիսների և տարեկան կատարման հաշվեքննություններից: Վերջիններիս իրականացման համար կիրառվում է Հաշվեքննիչ պալատի կողմից մշակված և հաստատված «Պետական բյուջեի երեք, վեց, ինն ամիսների և տարեկան կատարման հաշվեքննության ուղեցույցը»:

6. Հաշվեքննիչ պալատը պետական բյուջեի երեք, վեց և ինն ամիսների կատարման վերաբերյալ ընթացիկ եզրակացությունները, այդ ժամանակահատվածների ավարտման օրվանից հետո՝ չորս ամսվա ընթացքում, ներկայացնում է Ազգային ժողով:

2020թ. I կիսամյակի պետական բյուջեի կատարման հաշվեքննության վերաբերյալ

7. Կիսամյակային հաշվեքննությունների առարկան եղել է 2020թ. պետական բյուջեի վեց ամիսների մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեությունը:

8. Կիսամյակային հաշվեքննություններն իրականացվել են «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի, Հաշվեքննիչ պալատի ֆինանսական և համապատասխանության հաշվեքննության մեթոդաբանությունների, «Պետական բյուջեի երեք, վեց, ինն ամիսների և տարեկան կատարման հաշվեքննության ուղեցույց»-ի հիման վրա:

9. Կիսամյակային հաշվեքննության շրջանակներում Հաշվեքննիչ պալատն հաշվեքննություն է իրականացրել Նկար 1-ում նշված 16 պետական մարմիններում՝ ապահովելով ՀՀ պետական բյուջեի ծախսային մասի 84%-անոց ծածկույթ:

10. Կիսամյակային հաշվեքննություններն իրականացվել են մի շարք սահմանափակումների պայմաններում, մասնավորապես՝


10.1. Ռազմական դրությամբ պայմանավորված ՀՀ 2020թ. վեց ամիսների պետական բյուջեի կատարման հաշվեքննությունները ՀՀ հաշվեքննիչ պալատի 2020թ. սեպտեմբերի 30-ի թիվ 168-Ա որոշմամբ կասեցվել և վերսկսվել են ՀՀ հաշվեքննիչ պալատի 2020թ. նոյեմբերի 20-ի թիվ 171-Ա որոշմամբ (կասեցված են եղել 37 աշխատանքային օրով):

10.2. Նոր կորոնավիրուսային համավարակով (COVID-19) պայմանավորված հեռավար աշխատանքի իրականացումը սահմանափակել է հաշվեքննության օբյեկտների ներկայացուցիչների հետ շփումները և հաշվեքննության զննում ու դիտարկում ընթացակարգերի իրականացումը:

10.3. Մի շարք դեպքերում հաշվեքննության օբյեկտների կողմից չի պահպանվել «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ տեղեկատվության տրամադրման ժամկետի պահանջը: Արձանագրվել են նաև պահանջված տեղեկատվության չտրամադրման, ոչ ամբողջապես կամ պահանջված ձևաչափին ոչ համապատասխան տրամադրման դեպքեր:

Նկար 1

Հաշվեքննության ենթարկված պետական մարմինները և դրանց գծով ծախսերի տեսակարար կշիռը պետական բյուջեում



Ծանոթություններ

1 Հաշվեքննիչ պալատի 2020թ. գործունեության ծրագրի համաձայն, հաշվեքննության ենթակա օբյեկտների թվում էր ՀՀ ԱՆ-ն (բաժին է ընկնում պետբյուջեի ծախսերի 6.4%-ը), որում հաշվեքննությունը կատարված է եղել ԱՆ-ի խնդրանքով՝ համաճարակային իրավիճակի և ուղղակի դրության հետևանքով առաջացած գերձանրաբեռնվածությամբ պայմանավորված:

2 ՊՆ-ում և ԱԳՆ-ում իրականացված հաշվեքննությունները պարունակել են օրենքով սահմանված գաղտնիք հանդիսացող տեղեկություններ, ըստ այդմ՝ դրանց ընթացիկ եզրակացությունները հրապարակման ենթակա չեն եղել:

Աղբյուր՝ ՀՀ 2020թ. I կիսամյակի պետական բյուջեի կազմարման հաշվեկրկություն:

11. Տեղեկագիրը ներկայացված է հնարավորինս պարզ շարադրանքով, չի ծանրաբեռնված իրավական ակտերի դրույթներին հղումներով և աուդիտորական ապացույցների հանգամանալից ներկայացմամբ: Այդ ողջ տեղեկատվությունը կարելի է գտնել յուրաքանչյուր հաշվեքննության ընթացիկ եզրակացությունում:

12. Տեղեկագրի խեղաթյուրումներ բաժնում թվային ցուցանիշները ներկայացված են միլիոն դրամներով, տասնորդականի ճշգրտությամբ:

Հավելված 2

Հաշվեքննությունների ամփոփ արդյունքները

Հ/Հ	Գերադե- չության անվանումը	2020թ. կիսամյակի փաստացի ծախս (հազ. դրամ)	Խեղաթյուրումներ			Անհամապատասխանությունների քանակ			Առաջարկու- թյունների քանակ	Հաշվեքննության օբյեկտի արձագանք՝ անհամապատասխանություն- ներին	
			Տես. կշիռը փաստացի ծախսում (%)	Քա- նակ	Գումար (հազ. դրամ)	Բարձր ռիսկային	Միջին ռիսկային	Ցածր ռիսկային		Ընդունվել է	Ներկայացվել է բացատրություն
1	ՏԿԵՆ	26,187,220.03	2.89	9	757,083.30	8	3	-	2	11	-
2	ՏԿԵՆ ԶԿ	5,164,736.71	13.80	2	712,655.59	-	-	5	7	5	-
3	ԷՆ	6,939,000.40	2.04	5***	141,638.20	4	5	2	14	8	3
4	ԱԻՆ	6,187,029.47	0.13	2	7,770.35	10	1	-	-	11	-
5	ԱԱԾ	13,504,747.29	-	-	-	-	-	-	-	-	-
6	ԿԳՄՍՆ	31,853,358.79	-	-	-	3	1	-	4	4	-
7	ԳԿ	5,606,403.01	-	-	-	6	-	-	10	10	-
8	ԱՍՀՆ ՍԱԾ	210,702,618.52	-	-	-	-	-	3	-	-	3
9	ԱՍՀՆ*	5,359,606.44	-	-	-	-	-	19	4	12	7
10	ՖՆ	108,740,839.45	-	-	-	-	-	-	-	-	-
11	ՊԵԿ	60,664,860.22	-	-	-	-	-	-	-	-	-
12	Ոստ	28,130,657.62	-	-	-	-	1	3	1	4	-
13	ՎԱ	9,432,394.18	-	-	-	-	-	-	1	-	-
14	ԴԴ	4,516,304.17	-	-	-	-	-	-	-	-	-
15	ԱԳՆ (գաղտնի)	7,280,646.16	-	-	-	-	-	-	-	-	-
16	ՊՆ (գաղտնի)	117,727,775.50	-	-	-	-	-	-	-	-	-
17	ԱՆ**	48,667,866.51	-	-	-	-	-	-	-	-	-
	ԸՆԴԱՄԵՆԸ	696,666,064.47	0.23	18	1,619,147.44	31	11	32	43	65	13

* Հայտնաբերված 19 միջոցառումներում առկա է 5 իրավական ակտերով սահմանված միևնույն պահանջի անհամապատասխանություն:

** Հաշվեքննությունը կասեցվել է:

*** Խեղաթյուրումներից մեկը ոչ ֆինանսական ցուցանիշների գծով